



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«30» ապրիլի 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 202-Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 134-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հաշվի առնելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 195-Ա հրամանը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 30-ի ««Աքայապ էյրլայնզ» ՍՊ ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ և «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված արտոնություն տալու մասին» թիվ 134-Ա հրամանի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3"Հաշվի առնելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 27-ի ««Բիս Էյրլայն» ՍՊ ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն տալու և «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնության տրամադրման մասին» թիվ 195-Ա հրամանի 3-րդ կետը՝ սույն հրամանի 2-րդ կետով նշված արտոնությունը կիրառելի է 2021 թվականի մայիսի 28-ից՝ ամիսների նվազման կարգով:» :

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

 Recoverable Signature

X *Tatevik Revazyan*

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926